

եւ ոչ այլոց զինու խոցեալ է զդա: 4 Իսկ կեսք յառնելոյ ակն ունէին նմա. մինչեւ զգլուխն անդէն ի կոճեղն կարեալ կցեցին, եւ հանին եդին ի տանիսն աշտարակի միոյ. ասէին՝ թէ վասն զի այր քաջ էր, առլեզք իջանէն եւ յարուցանեն զդա: 5 Պահապան կային, եւ ակն ունէին յառնելոյ, մինչեւ նեխեցաւ մարմինն: 6 Ապա իջուցին յաշտարակէ անտի, եւ լացին թաղեցին զնա որպէս արւեն էր:

ԳԼՈՒԽ ԼԷ.

1 Յաղագս գալոյն Մանուէլի ի գերութենէ Պարսից, եւ ինդրելոյ զվրեժն Մուշեղի, եւ հալածելոյ զթագաւորն Վարազդատ յերկրէն Յայոց, եւ յինքն ունելոյ զերկիրն Յայոց:

2 Ապա կացոյց թագաւորն Վարազդատ ի գործ զարավարութեան սպարապետութեանն զԲատ նահապետն Սահառունեաց տոհմին, որ էր իւր դայեակ, բանսարկու քունն սպանողն Մուշեղի: 3 Եւ էր նա սպարապետ փոխանակ նորա, զարավար ամենայն Յայոց: 4 Եւ ազգին Մամիկոնեան տոհմին տանուտեր նահապետ կացոյց թագաւորն՝ Վաչէ անուն ի նմին տոհմէ:

5 Յայնմ ժամանակի դարձան ի գերութենէն եկին ի Պարսից, զոր տարեալ էր Շապիոյ արքային, արք¹ երկու եղբարք ի Մամիկոնեան տոհմէն. անուն միումն Մանուէլ, եւ անուն երկրորդին Կոմս²: 6 Քանզի զայն ժամանակաւ թագաւորին Պարսից Սասանականին տուեալ էր պատերազմ ընդ մեծ թագաւորին Քուշանաց ընդ Արշակունւոյն, որ նստեր ի Բաղի քաղաքին: 7 Եւ իբրեւ երթային զարքն Պարսից ի Քուշանացն պատերազմն, ապա եւ զմարդիկ գերութեանն որ ի Յայոց էին թագաւորին Պարսից՝ յղեր ի պատերազմ ընդ իւր զարսն. եւ Մանուէլս այս երթայր ընդ նոսա հանդերձ եղբարքն իւրով Կոմսիւ: 8 Եւ իբրեւ եղեն խառնուրդք երկոցունց զնոսանց ընդ միմեանս, ապա ի պարտութիւն մատնեցան զարքն Պարսից յերեսաց զարացն Քուշանաց. դարձան ի փախուստ անհնարին հարուածովք, հասին ի վերայ զարացն Պարսից. զի ոչ մի ի նոցանէն ոչ ապրեցուցանէին ի զարացն Պարսից. բանքեր անգամ ոչ ապրեր. բայց Մանուէլ որդի Արտաշինայ ի Մամիկոնեան ի տոհմէն, հանդերձ եղբարքն իւրով Կոմսիւ, բազում քաջութիւնս կատարեալ ի նմին ճակատուն, սակայն հետիոտս ապրէին: 9 Եւ զային յամենայն զարացն Պարսիցն սոքա միայն հասանէին առ թագաւորն Պարսից որջ ապրեալք, եւ բազում քաջութիւնս կատարեալ:

10 Սակայն թագաւորին Պարսից բազում տրտմութիւն լինէր յաղագս իւրոյ զարացն եւ կոտորածոյն. սակայն եւ զայնու զայրացեալ զակատեր, զի

1 Յոր. որք

2 Յամենայն օրինակս՝ Կոմ. ուղղեցաք ըստ յաջորդացն